Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 14-ի նիստի N 52
արձանագրային որոշման

Ոչ պաշտոնական թարգմանություն

<u>Ֆինանսական համաձայնագիր</u>

KfW, Մայնի Ֆրանկֆուրտ
(«**KfW**»)-ի

և

Հայաստանի Հանրապետության,
ի դեմս ֆինանսների նախարարության
(«Ստացող»)-ի

միջև

5,339,139.38 եվրո գումարով

«Աջակցություն գյուղատնտեսության ապահովագրական համակարգին»

(BMZ no. 2016 68 458)
ծրագրի համար

DRAFT

Հոդված 1

Ֆինանսական օժանդակության գումարի չափը և նպատակը.

1.1 KfW-ն Ստացողին կհատկացնի 5,339,139.38 եվրոն չգերազանցող ֆինանսական օժանդակություն («Ֆինանսական օժանդակություն»),

որը բաղկացած է Մասնաբաժին 1-ից՝ մինչև

4,824,139.38 եվրո («Մասնաբաժին 1»)

և մեկ Մասնաբաժին 2-ից՝ մինչև

515,000.00 եվրո («Մասնաբաժին 2»):

Սույն Ֆինանսական օժանդակության գումարը ենթակա չէ հետ վերադարձման, եթե այլ բան սահմանված չէ Հոդված 4.2-ով:

1.2 Ստացողը հատկացնում է Ֆինանսական օժանդակության ողջ Մասնաբաժին 1-ը հիմնադրվելիք ծրագրի ընկերությանը («Ծրագրի իրականացման գործակալություն 1»), իսկ Ֆինանսական օժանդակության Մասնաբաժին 2-ը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին («Ծրագրի իրականացման գործակալություն 2»), որոնք միասին անվանվում են «Ծրագրի իրականացման գործակալություններ»՝ ըստ Հոդված 2-ում սահմանված պայմանների: Ստացողն ապահովում է Ֆինանսական օժանդակության Մասնաբաժին 1-ի օգտագործումը Ծրագրի իրականացման գործակալություն 1-ի կողմից՝ բացառապես ֆինանսավորելու ներդրվող գյուղատնտեսության ապահովագրական համակարգի շրջանակներում վաճառվող ապահովագրական պայմանագրերի ապահովագրավճարների սուբսիդավորումը և Ծրագրի իրականացման գործակալություն 2-ի կողմից Ֆինանսական օժանդակության Մասնաբաժին 2-ի օգտագործումը՝ ֆինանսավորելու համակարգի ներդրման խորհրդատուի («Ծրագիր») ծախսերը: Ստացողը, Ծրագրի իրականացման գործակալությունները և KfW-ն առանձին համաձայնագրերով են սահմանում Ծրագրի մանրամասները և ֆինանսական օժանդակությունից ֆինանսավորման ենթակա ապրանքներն ու ծառայությունները:

1.3 Հարկերը, տուրքերը և այլ պետական վճարները, որոնք ենթակա են վճարման Ստացողի կամ Ծրագրի իրականացման գործակալությունների կողմից չեն ֆինանսավորվում ֆինանսական օժանդակությունից: ՀՀ օրենսդրության ներքո Ֆինսնասական օժանդակության ներքո վճարվելիք

DRAFT

հարկերն ու այլ տուրքերը կարգավորվում են 1998թ. հունիսի 28-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև Տեխնիկական համագործակցության համաձայնագրի համաձայն:

Հոդված 2

Ֆինանսական օժանդակության հատկացումը Ծրագիրն իրականացնող գործակալություն 1-ին:

2.1 Ստացողը Ֆինանսական օժանդակությայն Մասնաբաժին I-ը հատկացնում է Ծրագրի իրականացման գործակալություն 1-ին՝ որպես անհատույց դրամաշնորհ առանձին ֆինանսական համաձայնագրի ներքո («Հատկացման համաձայնագիր»):

2.2 Մասնաբաժին 1-ի առաջին հատկացումից առաջ Ստացողը KfW-ին է ուղարկում Հոդված 2.1-ում նշված Հատկացման համաձայնագիր 1-ի օրինակ:

2.3 Ֆինանսական օժանդակության հատկացումը չի հանգեցնում Ծրագրի իրականացման գործակալությունների կողմից սույն Համաձայնագրի ներքո KfW-ին վճարման պարտականությունների իրականացմամբ որևէ պարտավորության:

Հոդված 3

Հատկացումներ

3.1 KfW-ն Ֆինանսական օժադակությունը հատկացնում է Ծրագրի առաջընթացին համապատասխան և Ստացողի և Ծրագրի իրականացման գործակալություն 1-ի՝ Ֆինանսական օժանդակության Մասնաբաժին 1-ի տրամադրման մասին դիմում-հայտի հիման վրա և Ստացողի ու Ծրագրի իրականացման գործակալութուն 2-ի՝ Ֆինանսական օժանդակության Մասնաբաժին 2-ի տրամադրման մասին դիմում-հայտի հիման վրա: Առանձին համաձայնագրերի հիման վրա Ստացողը, Ծրագրի իրականացման գործակալությունները և KfW-ն սահմանում են հատկացումների ընթացակարգը, մասնավորապես այն ապացույցները, որոնք վկայում են ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման մասին:

3.2 KfW-ն իրավունք ունի հրաժարվել հատկացումներ կատարել 2025թ.-ի դեկտեմբերի 30-ից հետո:

DRAFT

Հոդված 4

Հատկացումների կասեցումը և հետ վերադարձը

4.1 KfW-ն չի կարող կասեցնել հատկացումները, եթե

ա) Ստացողը չի ձախողել KfW-ին վճարման պարտավորությունների կատարումը սահմանված ժամկետում,

բ) չեն խախտվել սույն Համաձայնագրի ներքո կամ սույն Համաձայնագրին առնչվող առանձին համաձայնագրերի ներքո ստանձնած պարտավորությունները,

գ) Ծրագրի իրականացման գործակալություններից որևիցե մեկը չի կարողանում ապացուցել, որ ֆինանսական օժանդակության միջոցները նպատակայնորեն են ծախսվել,

դ) սույն Համաձայնագրի ներքո KfW-ի պարտավորությունների կատարումը չի խախտում գործող օրենքը կամ

ե) ի հայտ չեն եկել Ծրագրի իրականացմանը, գործարկմանը կամ նպատակին խոչընդոտող կամ դրանք լրջորեն վտանգող արտառոց հանգամանքներ:

4.2 Եթե Հոդված 4.1-ի բ), գ) կամ դ) կետերում սահմանված իրադրություններից որևէ մեկը տեղ է գտել և չի վերացվել KfW-ի կողմից սահմանված ժամկետում, որն, այնուամենայնիվ, առնվազն 30 օր է, KfW-ն իրավունք ունի.

ա) Հոդված 4.1-ի բ) կամ դ) կետերում սահմանված դեպքում պահանջել բոլոր հատկացված գումարների անհապաղ վերադարձը,

բ) Հոդված 4.1-ի գ) կետում սահմանված դեպքում պահանջել այսպիսի գումարների անհապաղ վերադարձը, քանի որ Ծրագրի իրականացման գործակալություններից որևէ մեկը չի կարողանում ապացուցել, որ դրանք նպատակայնորեն են օգտագործվել:

Հոդված 5

Ծախսեր և պետական վճարներ

Ստացողն է կրում սույն Համաձայնագրի կնքման և իրականացման հետ կապված, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դուրս կամ համապատասխան որևէ վայրում ապահովում է իր հարկերից ազատումը բոլոր հարկերի և գոյացող պետական վճարների հետ կապված ծախսերը, ինչպես նաև ֆինանսական օժանդակության հատկացումների հետ կապված փոխանցումներից և արժույթի փոխանակումներից գոյացող և կուտակվող ծախսերը:

DRAFT

Հոդված 6

Պայմանագրային դրույթներ և ներկայացուցչական իրավունք

6.1 Ֆինանսների նախարարը և այն անձինք, որոնք նախարարի կողմից կնշանակվեն KfW-ի հետ աշխատանքի համար և կլիազորվեն վավերացված ստորագրության նմուշներով, կներկայացնեն Ստացողին սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում: Ներկայացուցչական իրավունքն ուժ մեջ կլինի այնքան ժամանակ, քանի դեռ KfW-ն չի ստացել այդ իրավունքի դադարեցման մասին ծանուցում համապատասխան լիազորում ունեցող ներկայացուցչի կողմից:

6.2 Սույն Համաձայնագրի փոփոխություններն արվում են գրավոր և ուժի մեջ են մտնում բոլոր կողմերի կողմից ստորգրման օրը: Ցանկացած այսպիսի ծանուցում կամ հայտարարություն ստացված է համարվում այն ժամանակ, երբ ստացվում է կողմ հանդիսացող համապատասխան անձի հետևյալ հասցեում կամ համապատասխան կողմ հանդիսացող անձի մեկ ուրիշ հասցեում, որի մասին նախապես ծանուցվել է համաձայնագրի մյուս կողմը հանդիսացող անձին.

KfW-ին՝

KfW
Փոստարկղ 11 11 41
60046 Մայնի Ֆրանկֆուրտ
Գերմանիայի Դաշնային Հանրապետություն
Ֆաքս. +49 69 7431-2944

Ստացողին՝

Հայաստանի Հանրապետություն
Ֆինանսների նախարարություն
1 Մելիք-Ադամյան փողոց,
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն
Ֆաքս: +37411 800 132

DRAFT

Հոդված 7

Ծրագիրը

7.1 Ստացողը պարտավոր է կատարել հետևյալ գործողությունները, ինչպես նաև ապահովել դրանց կատարումը Ծրագրի իրականացման գործակալությունների կողմից.

ա) նախապատրաստել, իրականացնել, գործարկել Ծրագիրը խելամիտ ֆինանսական և ինժեներական աշխատակարգերին համապատասխան՝ չխախտելով բնապահպանական և սոցիալական ստանդարտները և Ծրագրի իրականացման գործակալության և KfW-ի միջև համաձայնեցված Ծրագրային հայեցակարգին էապես համապատասխանությամբ,

բ) Ծրագրի կառուցման նախապատրաստումն ու վերահսկողությունը հանձնարարել անկախ, որակավորված ինժեներ-խորհրդատուների, իսկ Ծրագրի իրականացումը՝ որակավորված կազմակերպությունների,

գ) կնքել ֆինանսական օժանդակությունից ֆինանսավորման ենթակա ապրանքների և ծառայությունների համար պայմանագրերը՝ գնառաջարկների՝ նախապես անցկացված միջազգային մրցույթի արդյունքում,

դ) պահել կամ պահանջել, որպեսզի պահվեն գրանցամատյաններ և գրանցումներ, որոնք պարզորոշ ցույց կտան Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների բոլոր ծախսերը՝ հստակորեն տարանջատելով սույն ֆինանսական օժանդակության միջոցներով ֆինանսավորվող ապրանքները և ծառայությունները,

ե) հնարավորություն տալ KfW-ի ներկայացուցիչներին ցանկացած ժամանակ ստուգել վերոհիշյալ գրանցամատյանները, գրանցումները և Ծրագրի իրականացմանն առնչվող ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաև այցելել Ծրագրի հիմնակայանը և դրան առնչվող բոլոր կայանքները,

զ) KfW-ի պահանջով՝ KfW-ին տրամադրել Ծրագրի և դրա հետագա ընթացքին առնչվող ցանկացած տեղեկատվություն և հաշվետվություն,

է) սեփական նախաձեռնությամբ անմիջապես տեղեկացնել KfW-ին, եթե որևէ հանգամանք կարող է խոչընդոտել կամ լրջորեն վտանգել Ծրագրի իրականացումը, գործարկումը կամ Ծրագրի նպատակը:

7.2 Ստացողը, Ծրագրի իրականացման գործակալությունները և KfW-ն սահմանում են Հոդված 7.1-ի դրույթներին վերաբերող մանրամասները առանձին համաձայնագրերով:

7.3 Ստացողը՝

ա) աջակցում է Ծրագրի իրականացման գործակալություններին Ծրագրի իրականացման ընթացքում խելամիտ ինժեներական և ֆինանսական աշխատակարգերի համապատասխանության և սույն Համաձայնագրի ներքո Ծրագրի իրականացման գործակալությունների պարտավորությունների կատարման ուղղությամբ և մասնավորապես՝ Ծրագրի իրականացման գործակալություններին տրամադրում Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները,

բ) ապահովում է Ծրագրի լիարժեք ֆինանսավորումը և KfW-ի պահանջով տրամադրում է ապացույցներ, որոնք վկայում են սույն Ֆինանսական օժանդակությունից չվճարվող ծախսերի մարման մասին և

գ) տրամադրում է 5,000,000.00 եվրո սեփական միջոցներից որպես անհատույց դրամաշնորհ Ծրագրի իրականացման գործակալություն 1-ին, որը հատկացվում է Մասնաբաժին 1-ին զուգահեռ:

7.5 Ֆինանսական օժանդակությունից ֆինանսավորվող ապրանքների փոխադրման դեպքերի նկատմամբ կիրառվում են Միջկառավարական համաձայնագրի այն դրույթները, որոնք հայտնի են Ստացողին:

Հոդված 8

Ծրագրի հետ կապված տեղեկատվության հրապարակումը եւ փոխանցումը

8.1 Զարգացման համագործակցության ոլորտում առավելագույն թափանցիկության և արդյունավետության միջազգայնորեն ընդունված սկզբունքների հետ համապատասխանության ապահովման նպատակով՝ KfW-ն հրապարակում է Ծրագրի և պայմանագրի կնքմանը նախորդող բանակցությունների ընթացքում դրա ֆինանսավորման վերաբերյալ ընտրված տեղեկատվությունը (ներառյալ գնահատման հաշվետվությունները), մինչդեռ Ծրագրին առնչվող համաձայնագիրը(երը) իրականացվում է (են) նաև պայմանագրի կնքմանը հաջորդող փուլում (այսուհետ՝ «**Ողջ ժամանակահատված**»):

Տեղեկատվությունը կանոնավոր կերպով հրապարակվում է KfW-ի կայքում՝ «KfW զարգացման բանկ» ըստ գործունեության կոնկրետ տարածքի (http://transparenz.kfw-entwicklungsbank.de/):

Տեղեկատվության հրապարակումը (կամ KfW-ի, կամ երրորդ անձանց կողմից ըստ ստորև բերված Հոդված 8.3-ի) Ծրագրի և դրա ֆինանսավորման եղանակների մասին չի ներառում որևէ պայմանագրային փաստաթուղթ կամ որևէ զգայուն ֆինանսական կամ բիզնես գործունեությանը վերաբերող մանրամասն տեղեկատվություն Ծրագրում կամ դրա ֆինանսավորման գործողություններում ներգրավված կողմերի մասին, օրինակ՝

DRAFT

ա) ներքին ֆինանսական տվյալների մասին տեղեկատվություն,
բ) բիզնես ռազմավարություններ,
գ) ներքին կորպորատիվ ուղեցույցներ և հաշվետվություններ,
դ) ֆիզիկական անձանց անձնական տվյալներ,
ե) կողմերից որևէ մեկի ֆինանսական դիրքի մասին KfW-ի ներքին վարկանիշը:

8.2 KfW-ն Ողջ ժամանակահատվածում Ծրագրի և դրա ֆինանսավորման եղանակների մասին ընտրված տեղեկատվությունը ներկայացնում է ստորև նշված մարմիններին, մասնավորապես թափանցիկության և արդյունավետության ապահովման նպատակով.

ա) KfW-ի մասնաճյուղերին,
բ) Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը և դրա պատկան մարմիններին, իշխանություններին, հաստատություններին, գործակալություններին կամ կառույցներին,
գ) Գերմանական երկկողմ զարգացման համագործակցության շրջանակներում ներգրավված այլ իրականացնող կազմակերպություններին, մասնավորապես՝ Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ին,
դ) վիճակագրական տվյալների հավաքագրման գործողություններում ներգրավված միջազգային կազմակերպություններին կամ նրանց անդամներին, հատկապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը (ՏՀԶԿ) և դրա անդամներին:

8.3 Բացի այդ, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը խնդրել է KfW-ին Ողջ ժամանակահատվածում Ծրագրի և դրա ֆինանսավորման եղանակների մասին ընտրված տեղեկատվությունը ներկայացնել հետևյալ մարմիններին, որոնք կիրապարակեն իրենց նպատակներին համահունչ հատվածները.

ա) Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ Միջազգային օժանդակության թափանցիկության նախաձեռնության նպատակներով (http://www.bmz.de/de/was_wir_machen/wege/transparenz-fuer-mehr-Wirksamkeit/index.html),
բ) Գերմանիայի առևտրի և ներդրումների գործակալություն՝ (ԳԱՆԳ) շուկայի մասին տեղեկատվության հրապարակման նպատակներով (http://www.gtai.de/GTAI/Navigation/DE/trade.FOO),
գ) ՏՀԶԿ՝ զարգացման համագործակցության շրջանակներում ֆինանսական հոսքերի մասին հաշվետվողականության նպատակով (http://stats.oecd.org/),
դ) Զարգացման գնահատման գերմանական ինստիտուտ (DEval)՝ ընդհանուր գերմանական զարգացման համագործակցությունը գնահատելու նպատակով՝ ապահովելու թափանցիկություն և արդյունավետություն (http://www.deval.org/de/):

8.4 KfW-ն իրավունք է վերապահում Ողջ ժամանակահատվածում Ծրագրի և դրա ֆինանսավորման եղանակների մասին տեղեկատվության փոխանցումը (նաև

DRAFT

հրապարակման նպատակներով) այլ երրորդ անձանց՝ օրինական շահերի պաշտպանության նպատակով:

KfW-ն չի փոխանցում տեղեկատվությունը այլ երրորդ կողմերի, եթե Ստացողի կամ Ծրագրի իրականացման գործակալությունների օրինական շահերը տեղեկատվության չփոխանցման դեպքում գերակշռում են KfW-ի՝ դրանց փոխանցման դեպքում շահերի նկատմամբ: Ստացողի կամ Ծրագրի իրականացման գործակալությունների օրինական շահերը մասնավորապես ներառում են Հոդված 8.1-ում հիշատակված այն զգայուն տեղեկատվության գաղտնիության պահպանումը, որի հրապարկումը բացառվում է:

Բացի այդ, KfW-ն իրավունք ունի տեղեկատվություն փոխանցել երրորդ անձանց, եթե դա անհրաժեշտ է կանոնադրական կամ կանոնակարգային պահանջներից ելնելով կամ դատարանում կամ վարչական վարույթում հայցերը կամ այլ օրինական իրավունքները հաստատելու կամ պաշտպանելու նպատակով:

Հոդված 9

Այլ դրույթներ

9.1 Ստացողը ապահովում է , որ ինքը և Ծրագրի իրականացման գործակալություններն ապահովեն, որ ծրագրի նախապատրաստման և իրականացման, ֆինանսավորվող ապրանքների և ծառայությունների պայմանագրերի կնքման և Ֆինանսական օժանդակության գումարներից հատկացումների դիմում-հայտերի ներկայացման համար պատասխանատու անձինք չեն պահանջում, ստանձնում, փոխանցում, շնորհում, տալիս կամ ստանում խոստումներ անօրինական վճարումների կամ այսպիսի գործողությունների հետ կապված այլ առավելությունների մասին:

9.2 Ստացողն ապահովում է Ծրագրի իրականացման գործակալությունների կողմից KfW-ի պահանջով անհապաղ ողջ տեղեկատվության և բոլոր փաստաթղթերի տրամադրումը, որոնք անհրաժեշտ են KfW-ին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման պարտավորությունների կատարման, ինչպես նաև այս նպատակով Ծրագրի իրականացման գործակալությունների հետ գործնական հարաբերությունների շարունակական մշտադիտարկման համար:

Ստացողն ապահովում է, որ Ծրագրի իրականացման գործակալությունները հանդես գան իրենց իսկ անունից և իրենց հաշիվներով առանձին համաձայնագրեր կնքելիս և սույն Համաձայնագիրն իրականացնելիս: Գերմանական օրենքների կամ Ստացողի հիմնադիր երկրի օրենքի նկատմամբ Ստացողն ապահովում է հետևյալը.

ա) Ծրագրի իրականացման գործակալությունների սեփական ռեսուրսները կամ Ծրագրի ֆինանսավորման համար ներդրված գումարների ապօրինի ծագման չլինելը և, մասնավորապես, ի թիվս այլոց, դրանց կապ չունենալը թմրադեղերի թրաֆիքինգի, կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության կամ ահաբեկչության հետ,

DRAFT

բ) Ծրագրի իրականացման գործակալությունների բաժնետիրական կապիտալի երբևէ կապված չլինելը ապօրինի ծագման և, մասնավորապես, ի թիվս այլոց, թմրադեղերի թրաֆիքինգի, կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության կամ ահաբեկչության հետ,

գ) Ծրագրի իրականացման գործակալությունների՝ ապօրինի ծագման գույքի ձեռքբերման, սեփականության կամ տնօրինման, մասնավորապես երբևէ, ի թիվս այլոց, թմրադեղերի թրաֆիքինգի, կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության կամ ահաբեկչության հետ կապ չունենալը և

դ) Ծրագրի իրականացման գործակալությունների՝ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված չլինելը:

9.3 Ստացողն ապահովում է, որ Ծրագրի իրականացման գործակալությունները չեն ունենալու որևէ գործարար հարաբերություն կամ չեն ներգավվելու որևէ այլ գործողության մեջ

ա) այն անձանց, կազմակերպությունների կամ կառույցների հետ կամ ի շահ այն անձանց, կազմակերպությունների կամ կառույցների, որոնք ներառված են Միացյալ Ազգերի Անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատժամիջոցների ցուցակում («Պատժամիջոցների ցուցակներ») կամ

բ) որը կհանդիսանա արտաքին առևտուրը կանոնակարգող էմբարգոների կամ վերոհիշյալ հաստատությունների կողմից հայտարարված այսպես կոչված ֆինանսական պատժամիջոցների (բոլորը միասին՝ «Պատժամիջոցների ցուցակներ») խախտում:

Ստացողն ապահովում է Ծրագրի իրականացման գործակալության կողմից այնպիսի գործարար հարաբերությունների մեջ չներքաշվելը կամ այդպիսի հարաբերությունների կասեցումը այն անձանց, կազմակերպությունների կամ կառույցների հետ, որոնք ներառված են Պատժամիջոցների ցուցակում, ինչպես նաև որևէ այլ, Պատժամիջոցների խախտում համարվող գործունեության մեջ չներքաշվելը:

Ստացողն ապահովում է Ծրագրի իրականացման գործակալությունների կողմից KfW-ին անհապաղ և սեփական կամքով տեղեկացումը այնպիսի իրադարձությունների մասին, որոնց արդյունքում Ծրագրի իրականացման գործակալություններից որևէ մեկը, դրա կառավարման մարմինների կամ ղեկավար մարմինների որևէ անդամը կամ դրա բաժնետերերը հայտնվում են Պատժամիջոցների ցուցակում:

9.4 Ստացողը որևէ գործարք չի կատարում կամ չի ներգրավվում Ծրագրին առնչվող այլ գործողություններում, որոնք կարող են հանդես գալ որպես Պատժամիջոցների խախտում:

9.5 Եթե սույն Համաձայնագրի դրույթներից որևէ մեկը վավերական չէ, դա չի ազդում մնացած բոլոր դրույթների վրա: Արդյունքում առաջացած ցանկացած բաց լրացվում է այնպիսի դրույթով, որը համապատասխան է սույն Համաձայնագրի նպատակին:

DRAFT

9.6 Ստացողն իրավունք չունի նշանակել կամ փոխանցել կամ գրավադնել սույն Համաձայնագրով նախատեսված որևէ իրավունք:

9.7 Սույն Համաձայնագիրը կարգավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ: Կատարման վայրը Մայնի Ֆրանկֆուրտն է:

9.8 Սույն Համաձայնագրով սահմանված՝ KfW-ի, Ստացողի և Ծրագրի իրականացման գործակալությունների միջև իրավական հարաբերությունները կդադարեն Ողջ ժամանակահատվածի (Ինչպես սահմանված է հոդված 8.1-ում) ժամկետի ավարտին, սակայն ոչ ավելի ուշ, քան սույն համաձայնագրի կնքումից տասնհինգ տարի անց:

9.9 Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնում բոլոր կողմերի կողմից ստորագրման օրվանից:

Կազմված է 2 բնօրինակով՝ անգլերենով:

Երևան

_____, 2017թ. _____, 2017թ.

KfW

Հայաստանի Հանրապետություն

Ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության

_____ _____ _____

Անուն՝ Անուն՝ Անուն՝

Պաշտոն՝ Պաշտոն՝ Պաշտոն՝

DRAFT